

ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹, 77², և 77³ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Նորաշեն համայնքի ղեկավարին՝
 - 1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավական ակտերում փոփոխություններն իրականացնել ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.
 - 2) իրավական ակտերը վերնագրել և պահպանել իրավական տեխնիկայի կանոնները՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ և 40-րդ հոդվածների պահանջների.
 - 3) ընդունվող իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ նշել որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարում է ընդունվում տվյալ իրավական ակտը.
 - 4) «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ուղարկել ընդունվող նորմատիվ իրավական ակտերը.
 - 5) իրավական ակտերն ուժը կորցրած ճանաչել ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով.
 - 6) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2007թ. օգոստոսի 7-ի N 5, 2009թ. մարտի 2-ի N 5 և 2010թ. մայիսի 12-ի N 34 որոշումները.
 - 7) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածներով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010թ. մարտի 23-ի N 23 որոշումը և փոփոխություն կատարել համայնքի ղեկավարի 2009թ. փետրվարի 24-ի N 2 որոշմամբ հաստատված հավելված 1-ում.
 - 8) մշակել, հաստատել և գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային կանոնները.
 - 9) համայնքային սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջների.
 - 10) հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
 - 11) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված

աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ